


ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻՑ ՄԱՍ 2

Պի (π) թիվ



Պի (π) թիվը ամենահայտնի և ամենախորհրդավոր մաթեմատիկական հաստատունն է, որը արտահայտում է շրջանագծի հարաբերությունը շրջանի տրամագծին:

Այն օգտագործում են համաշխարհային վիճակագրության, եղանակի կանխագուշակման և այնպիսի տեղեր, որտեղ պահանջվում է մեծ հաշվարկային հզորություն:


Այն երբեք չի կրկնվում և երբեք չի վերջանում, եթե այն գրված է տասնորդական տեսքով:

Հետաքրքիր է, որ հանրահայտ Քեոփսի բուրգը պի թվի «մարմնացումն է», քանի որ նրա բարձրության հարաբերակցությունը հիմքի պարագծին տալիս է պի թիվը:

Պի թվի ստորակետից հետո առաջին 100 թվերը ունեն հետևյալ տեսքը.

3,1415926535897932384626433832795028841971693993751
058209749445923078164062862089986280348253421170679


Գուգոլ թիվը և գուգոլայլեքս



Գուգոլ թիվը, որը իրենից ներկայացնում է 100 0-ներով թիվ, հայտնի է դարձել ի շնորհիվ Google որոնողական համակարգի, որը մի փոքր այլակերպել է այն՝ Googol-ից դարձնելով Google:


Որքա՞ն մեծ է այս թիվը: Եթե ամբողջ տիեզերքը լցնենք թղթե թերթիկներով և ամեն մեկի վրա 0 գրենք, կպարզվի, որ մենք գրել ենք ընդամենը այս թվի կեսը

Աբրահամ դե Մուավրի մահը



Անգլիացի մաթեմատիկոս Աբրահամ դե Մուավրը հասուն տարիքում հանկարծ հայտնաբերեց, որ իր քնի տևողությունը օրական 15 րոպեով երկարում է: Թվաբանական պրոգրեսիա կազմելով, նա որոշեց այն օրը, երբ քունը կհասնի 24ժամի. 1754 թվականի նոյեմբերի 27-ը: Այդ օրն էլ նա մահացավ:

+ նշանը




Հավատացյալ հրեաները աշխատում են խուսափել քրիստոնեական խորհրդանիշներից և ընդհանրապես նշաններից, որոնք նման են խաչին: Օրինակ, հրեական որոշ դպրոցների աշակերտները + նշանի փոխարեն գրում են շրջված «T» կրկնող նշանը:

Եվրո




Եվրոյի թղթադրամների իրական լինելը կարելի է ստուգել դրա տառերի սերիական համարով և տասնմեկ թվերով: Հարկավոր է համարի տառը փոխել անգլերեն այբուբենում նրա զբաղեցրած հերթական համարով, այդ թիվն ավելացնել մնացածին, այնուհետև արդյունքի թվերը գումարել մինչև ստանալ մեկ նիշ: Եթե այդ թիվը 8 է, ապա թղթադրամը կեղծ չէ:

Նոբելյան մրցանակի լեգենդը



Ասում են, որ Ալֆրեդ Նոբելը մաթեմատիկան չի մտցրել իր մրցանակների ցուցակում, այն պատճառով, որ կինը նրան իբր դավաճանել է մաթեմատիկոսի հետ: Իրականում Նոբելը երբեք ամուսնացած չի եղել: Իսկական պատճառը հայտնի չէ, սակայն գոյություն ունի մի քանի վարկած: Օրինակ, որ այդ ժամանակ մաթեմատիկայի գծով նման մրցանակ արդեն կար: Մյուսը, որ մաթեմատիկոսները մարդկության համար կարևոր հայտնագործություն չեն արել, քանի որ այս գիտությունը միայն թեորիա է:

Ռեկոյի եռանկյունին



Դա երկրաչափական մարմին է, որն առաջանում է շրջագծի 3 հավասար շրջանակների հատումից: Ռեկոյի եռանկյունու հիման վրա պատրաստած շաղափը, թույլ է տալիս շաղափել քառակուսի բացվածք (2% անճշտությամբ):

Հանճարեղ Ջորջ Դանցիզ



George B. Dantzig

Ամերիկացի մաթեմատիկոս Դանցիզը, մի անգամ ուշանալով դասերից, կարծում է, որ գրատախտակին գրածը տնային հանձնարարություն է: Այն նրան թվում է բավականին բարդ, սակայն մի քանի օր անց, նրան հաջողվում է այն լուծել: Պարզվում է, որ նա լուծել է վիճակագրության երկու «անլուծելի» խնդիրներ, որոնք փորձում էին լուծել շատ գիտնականներ

0 թիվը




•
0-ն ժամանակակից մաթեմատիկայի հիմքն է դարձել: Չնայած մենք հաշվարկը սկսում ենք 1-ից, մաթեմատիկներն ու ծրագրավորողները սկսում են 0-ից:

Այն հայտնի է, որպես չեզոք էլեմենտ: Եթե դուք ինչ որ թիվ ավելացնեք, կամ հանեք 0-ից, ապա թիվը չի փոխվի: Եթե յուրաքանչյուր թիվ բազմապատկենք 0-ով, դուք կստանաք 0: Յուրաքանչյուր թիվ բարձրացրած 0 աստիճան հավասար է 1-ի: Բայց դուք չեք կարող թիվը բաժանել 0-ի:

Հաշվարկային համակարգում գոյություն չունի 0-ական տարի: Այն սկսում է՝ 3 տարի մ.թ.ա., 2 տարի մ.թ.ա, 1 տարի մ.թ.ա., այնուհետ սկսվում է 1 տարի մ.թ., 2 տարի մ.թ. և այլն:


Ոսկե հատվածք



•
Ոսկե հատվածք կամ ոսկե միջինը դա մեծություն է, որը հավասար է **1,6180339887** և արտահայտում է ունիվերսալ կատարյալ համամասնությունները գիտության մեջ և արվեստում:

Շատ նկարիչներ և քանդակագործներ օգտագործել են ոսկե հատվածքը իրենց աշխատանքներում, քանի որ հենց այդպիսի համամասնություններն են համարվում էսթետիկապես հաճելի:

Ֆիբոնաչիի թվերը



Այս թվերը անվանվել են ի պատիվ իտալացի մաթեմատիկոս Լեոնարդո Պիզանացու, առավել հայտնի որպես Ֆիբոնաչի, ով Եվրոպային ծանոթացրեց տասնորդական և արաբական թվերի հետ:

Ֆիբոնաչիի թվերը իրենցից ներկայացնում են հաջորդականություն այսպիսի հերթականությամբ.

0, 1, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, 89, 144, 233, ...

Ընդ որում ամեն հաջորդ թիվը հավասար է նախորդ երկու թվերի գումարին: Ֆիբոնաչիի հաջորդականությունը բնության մեջ նկատվում է կենդանիների և բույսերի մոտ: Արևածաղկի, արքայախնձորի, սոճու կոների (շիշկա) սերմերի նախշերում և նույնիսկ մարդու մարմնում (մեկ քիթ, երկու աչք, երեք վերջույթային սեգմենտ, հինգ մատ) նկատվում է այս հաջորդականությունը: